ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքը ՀՊՏՀ խորհրդի նախագահ, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի ծննդյան տարեդարձի առթիվ

Մեծարգո Հովիկ Արգամի

Առիթ ունենք ուրախությամբ արձանագրելու, որ այսօր Ձեր ծննդյան օրն է, Ձեր՝ պետական գործչի, մեր բուհի խորհրդի ղեկավարի ու բարեկամի ծննդյան հոբելյանը: Այն առիթ է տալիս մեզ՝ ՀՊՏՀ ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը հղելու Ձեզ ջերմ շնորհավորանքներ, ցանկանալու առողջություն, անսպառ եռանդ ու կորով, կյանքի վերընթաց ուղի: Առիթն օգտագործելով, որպես առհավատչյա հարգանքի ու երախտագիտության, պետք է փաստենք, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն ի դեմս Ձեզ՝ վայելում է բացառիկ մարդկային ու մասնագիտական հատկանիշներով օժտված ղեկավարի հոգածությունն ու ուշադրությունը:

Ցանկանում ենք, որ այս հոբելյանը Ձեր արգասաբեր գործունեությունը հարստացնի նորանոր դրվագներով, որոնք ծառայեցնում եք մեր ժողովրդի բարեկեցիկ ու հուսալի ապագայի կերտմանը:

Թող գալիք տարիները հարստացնեն Ձեր կենսափորձը, լեցուն լինեն անձնական ու աշխատանքային նորանոր գեղեցիկ էջերով:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր

Կորյուն Աթոյան

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝+37410 521720
Ֆաքս՝+37410 528864, էլ-փոստ՝info@asue.am, www.asue.am